

ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՎԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բարոյական դաստիարակության անքակտելի բաղադրամասը հանդիսացող սեռական դաստիարակությունը անհատի սեռական վարքի հասարակության համար ընդունելի ձևերի և համապատասխան դիրքորոշումների մշակմանը միտված տարաբնույթ միջոցառումների ընդգրկուն համակարգ է:

Ա.Սակարենկոյի դիպուկ բնութագրմամբ. «Սեռական դաստիարակությունը ամենից առաջ հասարակական անհատի կուլտուրայի դաստիարակությունն է» [1]: Դեռևս վաղըջական ժամանակներից առանձնահատուկ և հետևողական ուշադրություն է դարձվել հատկապես երիտասարդ սերնդի հոգեմարմնական ներդաշնակ զարգացմանը: Սեռական դաստիարակության հիմնախնդիրներին տարբեր ժամանակահատվածներում մանկավարժներից բացի անդրադարձել են նաև բժիշկները, հոգեբույժները, ֆիզիոլոգները, գիտության և մշակույթի ականավոր գործիչները: Արևմտահայ բնագետ, բժիշկ, խմբագիր, մանկավարժ և հասարակական-քաղաքական գործիչ Նազարեթ Տաղավարյանը (1862-1915) իր մի շարք աշխատություններում անդրադարձել է սեռական դաստիարակության խնդիրներին: Սեր ուսումնասիրություններում [2, 3], քննարկելով Ն.Տաղավարյանի մանկավարժական ժառանգությունը և դրան առնչվող այլ տարաբնույթ խնդիրներ, հպանցիկ անդրադարձել ենք նաև նրա բարոյական դաստիարակությանը միտված որոշ հարցերին: Հովածում քննարկվելու են Ն.Տաղավարյանի սեռական դաստիարակության հարցերին նվիրված մանկավարժական հայացքները: Ֆրանսիայուս բժշկագիտության դոկտորի գիտական աստիճանի արժանացած Ն.Տաղավարյանը սեռական դաստիարակության խնդիրներին անդրադարձել է «Մանրէաբանություն» (Կ.Պոլիս, 1898), «Առողջապահություն առտնին» (Կ.Պոլիս, 1898), «Ծննդական գործարանք» (Կ.Պոլիս, 1899 և 1914), «Մարդկային կազմախոսություն» (Կ.Պոլիս, 1900), «Բառացուցակ ախտանուանց» (Կ.Պոլիս, 1900 և 1901), «Առողջապահություն» (Կ.Պոլիս, 1912), «Մանրէք և իրենց շահատակությունը» (Կ.Պոլիս, 1903) մենագրություններում, տարաբնույթ ամսագրերում հրապարակված հոդվածներում, ինչպես նաև ցարդ անտիպ «Առողջապահություն աղջկանց» անտիպ ուսումնասիրության լեզրում: Դեռևս 1885 թվականին, Կ.Պոլսում իր իսկ հիմնադրած «Գիտական շարժում» հանդեսի լեզրում 23-ը նոր

բոլորած Ն.Տաղավարյանը հրապարակել է սեռական դաստիարակության հիմնախնդիրներին նվիրված հոդվածներ: Հայկական կրթօջախներում սովորողների առողջապահության, սեռական դաստիարակության, ինչպես նաև դպրոցական հիգիենա և դրանց առնչվող խնդիրները մեծապես հուզել են բժշկագիտության դոկտոր Ն. Տաղավարյանին: Ահա թե ինչու դպրոցական առողջապահության խնդիրներին նվիրված նրա 1898 թվականին Կ.Պոլսում լույս տեսած «Առողջապահություն առտնին» 517 էջանոց դասագիրքը նոր էջ է հայ մանկավարժության բազմադարյան պատմության էջերում: Ինչպես տեղեւանում ենք գրքի տիտղոսաթերթից. այն դասագիրք է ազգային երկրորդական վարժարանների համար: Հայ մանկավարժության պատմության համար անչափ հետաքրքիր է «Առողջապահություն առտնին» դասագրքի տպագրությունը կազմակերպելու համար Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի ուսումնական խորհրդի ազգային կեդրոնական վարչության տված եզրակացությունը. «Ազգային Կեդրոնական վարչության ուսումնական խորհուրդս՝ քննութեան առնելով «Դասագիրք Առողջապահութեան» անուն ընդարձակ աշխատությունն, պատրաստեալ ի տոբթոր Ն. էֆենտի Տաղավարեանէ, գտալ զայն ըստ ամենայնի օգտակար ի պէտս հայ ուսանողաց: Ուստի և այսու պաշտոնագրով կարտոնն և քերմապես կհանձնարարէ հիշեալ դասագրքին գործունեությունն ազգային վարժարանս: Կ. Պոլիս, 25.06.1897թ.»: Ն. Տաղավարյանի հիշյալ դասագրքի լույս տեսնելուց յոթ տարի անց, 1905 թվականին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում լույս է տեսել դարձյալ արևմտահայ բժիշկ, գրող և հասարակական գործիչ Կարապետ Փաշայանի (1864-1915) «Ընդարձակ դպրոցական առողջապահություն» դասագիրքը: Միայն մեկ օրինակով անդրադառնանք «Առողջապահություն առտնին» դասգրքում Ն. Տաղավարյանի՝ սեռական դաստիարակության հարցերից մեկին տված պարզաբանմանը: Խոսելով ֆրանկախոսի սիֆիլիսի մասին, Ն. Տաղավարյանը՝ խորապես մտահոգված լինելով երիտասարդների առողջ ապրելակերպով նշել է հետևյալը. «Սիֆիլիսը միայն մարդոց հատուկ է, և շատ կանուխեն սկսած է կոտորել մեր տեսակն: Կառավարությունը հարկ է, որ հսկեն հանրատուներն (հասարակաց տները – Մ.Մ.) և հանրակիներու ավորողիտեան ակտերու (նկատի ունի հունական դիցաբանությունում սիրո և գեղեցկության աստվածուհի՝ Աֆրոդիտեին – Մ.Մ.) նկատմամբ առողջության վիճակին: Հանրակիներն (հասարակաց տների կանայք – Մ.Մ.) զոնե շաբաթն անգամ մը բժշկական քննության ենթարկվելու են» [4]: 19-րդ դարի վերջին Ն.Տաղավարյանը՝ հավատարիմ մնալով բժշկի և մանկավարժի իր կոչմանը, մեծապես մտահոգված հայ աշակերտների ազգային ինքնագիտակցությամբ, ձգտել է աճեղ սերնդին հաղորդակից դարձնել հոգեկան և սեռական մաքուր կյանքի հասարակական, ազգային նշանակությանը: Աճել ամեն հնարավորը, որպեսզի

երիտասարդը կարողանա ստեղծել հաջող ընտանիք, ունենա առողջ զավակներ, դրանով իսկ նպաստելով ազգի ազնվացմանը: Վերը ասվածի լավագույն առիավատչյան Ն.Տաղավարյանի առողջապահական ներքոբերյալ հետևյալ ուղերձ-պատգամն է. «Սիֆիլիսով վարակյալ մը կատարելապես ապաքինվել է և յուր բժշկեն արտոնություն ընդունելուց հետո միայն կրնա ամուսնանալ» [4, էջ 429]: Ն. Տաղավարյանի ապրած ժամանակատավածում, այն է՝ 19-րդ դարի երկրորդ կես-քսաներորդ դարի առաջին քառորդ, սիֆիլիսը վերջնականապես չբուժվող հիվանդությունների թվին էր դասվում: Ահա թե ինչու բժիշկ և մանկավարժ Ն. Տաղավարյանը այդ կործանարար հիվանդությունը մասնակի բուժելու, թեթևացնելու համար իր «Առողջապահություն առտնին» դասագրքում առաջարկել է սնդիկի որոշ աղերը, ինչպես նաև մանիշի (յոդի - Մ.Մ.) մի շարք պատրաստուկները: 1899 թվականին Կ.Պոլսում լույս է տեսել Ն. Տաղավարյանի «Ծննդկան գործարանք» վերնագրով 176 էջանոց պատկերագրող մի ուսումնասիրություն: Ժամանակակից արդի հայերենով Ն. Տաղավարյանի նշված աշխատությունը կկոչվի «Սեռական օրգաններ»: Գրքի ներածականում հեղինակը «Ձոն առ հայ երիտասարդության» վերնագրով գրել է. «Գիրքս հատուկ դասագիրք մը չէ, այլ երկսեռ երիտասարդ, չափահաս, և նույն իսկ ծերունի հասարակությանն ուղղված գործ մըն է: Ամեն ոք սկզբամբ քաջ գիտե, և դժբախտաբար շատերը փորձով անծին և շատ սուղ կերպով ուսած են, թե քանի կարևոր է ծննդկան գործարանաց առողջապահությունն, որին օրինաց լավ տեղեկանալու համար կարևոր է և գիտենալ նոցա կազմախոսությունը և բնախոսությունը»: Նշենք, որ կազմախոսությունը արդի հայերենում անատոմիան է, իսկ բնախոսությունը ֆիզիոլոգիան: «Ծննդկան գործարանք»-ի լույս տեսնելուց կարճ ժամանակ անց դրանում քննարկված հարցերը բլում և երկարատև իրարամերժ քննարկումների առիթ հանդիսացան: Ն. Տաղավարյանի գիրքը նվիրված է մարդկանց երկու սեռերի՝ տղամարդկանց և կանանց սեռական օրգանների կազմությանն ու սեռական պրոցեսին: Դա փաստորեն իր սնջ ընդգրկել է մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և առողջապահական տարաբնույթ խնդիրները: Լինելով նախ բժիշկ, ապա և բնագետ-մանկավարժ, Ն. Տաղավարյանը այդ գրքով նպատակադրվել է առաջին անգամ համարձակորեն բարձրաձայնել, որ ժամանակն է ասելու, որ սեռական պրոցեսը նույնքան անհրաժեշտ և բնական պրոցես է, ինչպես ասենք, շնչառությունը, մարսողությունը: Երկրորդ նպատակը սեռական կյանքի մասին ճիշտ, գիտական գաղափար տալն էր: Ն. Տաղավարյանը 19-րդ դարի վերջին հիմք ընդունելով բնագիտության, մասնավորապես կենսաբանության և տվյալ ժամանակի բժշկագիտական նվաճումները, իր «Ծննդական գործարանք» աշխատության լույս ընծայելով, հիրավի գիտական սխրանք կատարեց: Նշված գրքի էջերում հայազգի բժիշկն ու մանկավարժը մեկ անգամ ևս հավաստեց 18-

որ դարի ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա, մանկավարժ և գրող Ժան-ժակ Ռուսոյի այն կարծիքը, համաձայն դրի. «Գիտություններն ուսումնասիրելու համար կա հատուկ տարիք: Եվ կա մի տարիք աշխարհիկ կյանքից օգտվելը լավ իմանալու համար: Նա, ով այդ սովորում է շատ վաղ տարիքում, ամբողջ կյանքում նրանից կօգտվի առանց ընտրության, անխորհուրդ կերպով և, չնայած բավարար չափով, բայց և այնպես առանց երբեք լավ հասկանալու, թե ինչ է անում: Բայց ով սովորում է դրանից օգտվելու կերպն ու տեսնում դրա շարժառիթները, այդ անում է առավել դատողությամբ, հետևապես և առավել ճշտությամբ ու շնորհքով» [5]: Միանգամայն ճիշտ է ընթերցել Ն. Տաղավարյանի հիշյալ գրքի իմաստը Ռ. Գաբրիելյանը. «Տաղավարյանը համապատասխան բազմաթիվ նկարներով, հանրամատչելի լեզվով լուսաբանում է կարևոր քիլոգիական պրոցեսը: Կեղծ բարեպաշտները, խավարամիտները «անբարոյականություն» էին համարում բացարձակ անկեղծությամբ սեռական պրոցեսի մասին խոսելը: Տաղավարյանի գիրքը շատ համարձակ քայլ էր: Ջարմանալի չէ, որ այդ աշխատության շուրջը բռնկվեց ուժեղ պայքար» [6]: Ն. Տաղավարյանը «Օննդական գործարանքը» հրատարակելիս քաջ գիտակցում էր, թե ինչպիսի երկարատև կատաղի պայքար է սկսվելու սեռական դաստիարակության տարաբնույթ խնդիրներին միտված իր համարձակ և աննահանջ հայացքների դեմ: Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ երբ «Օննդական գործարանքը» Կ. Պոլսում դարձյալ վերահրատարակվեց 15 տարի անց, 1914-ին, գրքի առաջաբանում նա գրեց հետևյալ պատգամ-ուղեծրը. «Խորհուրդ կուտան երկրորդական վարժարանաց հոգաբարձությանց և տեսչությանց, որ մեկդի թողնելով նախապաշարունները, իրենց հովանու տակ գտնված բարձրագույն կարգի աշակերտաց, մի քանի դասախոսությամբ ավանդել տան Օննդական գործարանաց ծանոթությունն ու առողջապահության օրենքները: Եվ ես հավատ ունիմ թե այսպիսով ավելի պիտի նպաստեն անոնց բարոյականի և մտային ու ֆիզիկական առողջության, քան բարոյախոսության դասերով և մարմնամարզի հրահանգներով»: 1973 թվականին երևանում լույս տեսած աշխատություններից մեկի առաջաբանում Ա. Աղոյանի գրած առաջաբանից ստորև ներկայացվող հատվածը լավագույնս հաստատում է շուրջ վեց տասնամյակ առաջ Ն. Տաղավարյանի արտահայտած մտքերի ճշմարիտ լավատեսությունը. «Սեռական մղումը, երբ առնանում է և կառավարվում գիտության մշակած դարավոր փորձի կանոններով՝ բարիք է մարդկությանը: Երբ մոռանում ենք մարդու ներաշխարհում թաքնված այդ բուռն ուժը սանձել և չափավորել շատ կյանքեր են կործանվում ի վնաս հասարակության» [7]:

Նշենք, որ դեռևս 19-րդ դարի սկզբին և դրան հաջորդած ժամանակներում արևմտահայ մի շարք բժիշկ մանկավարժներ իրենց ուսումնասիրություններում մեծապես անդրադարձել են սեռական դաստիարակության խնդիրներ-

րին՝ տպագրելով մեծ թվով ուսումնասիրություններ (Միքայել Ռեստե (1755-1844), Սերովբե Վիչենյան (Սերվիչեն) (1815-1897), Անդրեաս Փափովիչ (1809-1858), Նահապետ Ռուսինյան (1819-1876), Գալուստ Կոստանդյան (1840-1898) և ուրիշներ): Եթե մինչև Ն. Տաղավարյանի հիշյալ գրքի լույս ընծայումը միայն վերը նշված արևմտահայ հեղինակների կողմից երիտասարդ սերնդի սեռական դաստիարակության ու լուսավորության հարցերին նվիրված կային մեծ թվով ուսումնասիրություններ, ինչու՞ հենց 19-րդ դարի վերջին Ն. Տաղավարյանի գիրքը արժանացավ այդքան դաժան ու կոշտ ընդունելության: Պատասխանը միայն մեկն է՝ Ն. Տաղավարյանը գրեց և նարդկանց հրամցրեց համարձակ մտքեր, որոնք արևելյան կարծր մտածելակերպով նարդուն անմատչելի և անմարտելի էին: Ն. Տաղավարյանի գրքի դեմ եղած բազմաթիվ հրապարակումներից մշտնապես միայն Կեսար ծածկանունով գրախոսի արտահայտած ճակատամարտն էր: «Այդքան «դեկոլտե» գիրք մը՝ ոչ միայն մեր երկրին մեջ դպրոցի աշակերտի մը, այլ նույնիսկ աշխարհի են ազատամուլ ազգաց չէ թաղային, նույնիսկ բժշկական վարժարանաց ուսանողներուն անգամ իբր դասագիրք չեն հանձներ պաշտոնապես: Այդ գրքով, չէ՛ բարոյականը, այլ բացարձակապես անբարոյականը դասախոսած էք, տիար Տոբճոր» [8]: Ն. Տաղավարյանի գրքի համար գրվեցին նաև դրական կարծիքներ, որոնցից ժամանակագրական կարգով առաջինը արևմտահայ առաջավոր գաղափարներ որդեգրած Կարապետ Փաշայանի արտահայտածն է. «Շատ հաջող և բոլոր չափահասներու օգտակար և անհրաժեշտ գիրք մըն է» [9]: Խորհրդային Հայաստանում, դեռևս 1946 թվականին Ն. Տաղավարյանի վերը հիշատակված գրքի մասին Ռ. Գաբրիելյանը տվեց իր հիմնավոր և անաչառ գնահատականը. «Տաղավարյանի «Ծննդական գործարանը» աշխատությունը ունեցավ մեծ դաստիարակչական, կուլտուրական նշանակություն» [6, էջ 123]: Ն. Տաղավարյանի «Ծննդական գործարանը» գրքի լույս տեսնելուց հինգ տարի առաջ Բաքվում Ն. Դավթյանի հայերեն թարգմանությամբ և առաջաբանով լույս է տեսել Գեներալի «Խորհուրդներ ինտելիգենտ մայրերին» փոքրածավալ ուսումնասիրությունը: Ահա թե ինչ է գրում գրքի առաջաբանում Ն. Դավթյանը. «Բարոյական կրթությունից ու դաստիարակությունից զուրկ է հայ հասարակական կյանքը, որովհետև զուրկ է հայ ընտանիքի՝ հասարակության բաղկացուցիչ այդ օղակի կյանքը: Հայ ընտանեկան կյանքը, ընդհանրապես, եթե ոչ նահապետական, գոնե կիսանահապետական դրության մեջ է գտնվում»:

Այդ, 19-րդ դարի վերջին, Ն. Դավթյանի դիպուկ բնութագրմամբ. «Կիսանահապետական դրության մեջ գտնվող հայ ընտանիքի» գլուխ կանգնած ծնողները ի գորու էին ըմբռնելու Ն. Տաղավարյանի՝ սեռական դաստիարակության հարցերում առաջ քաշած համարձակ և առաջադիմական գաղափարները: 1906 թվականին, Ն. Տաղավարյանի «Ծննդական գործարանը» գրքի

լույս տեսնելուց յոթ տարի անց, դարձյալ Կ. Պոլսում լույս է տեսել անգլուհի Մերի Ալենի «Ի՞նչ պետք է գիտենա դեռատի աղջիկ մը» գիրքը: Անգլերենից այն հայերեն է թարգմանել և գրքի առաջաբանը գրել հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ և մանկավարժ Միքայել Շամտանճյանը (1874-1926): Ահա մի հատված այդ առաջաբանից, որը կարող է և՛ Տաղավարյանի սեռական դաստիարակությանը միտված ազատամիտ գաղափարների հակառակորդների լավագույն հակահարվածը լինել. «Եթե մեզինից ավելի ազատ սեռային կյանքով ապրող ժողովուրդներու պայմանները ընենք, ապա կտեսնենք հետևյալը: Բազմաթիվ են այն օրինակները, երբ պարկեշտ մնացած աղջիկներ հաճախ հիմարանոցի (հոգեբուժական հիվանդանոցի – Մ. Ս.) մեջ կգտնեն իրենց վերջը, որովհետև անծերին տանջելին և սխալ ըմբռնված բարոյականություն մը գիրենք զոհ ըրած է առանձնության մեջ մեղանջումին: Կան ալ մայրեր, որոնք սուկումով ու արհավիրքով կտեսնեն իրենց: Կատարյալ առողջությամբ և չափահաս մանչ տղաքը, որոնք օր մըն ալ կսկսին հյուծվիլ, բռնելով գերեզմանի ճամբան»:

«Ծննդական գործարանք» գրքի էջերում կարմիր թելի պես անցնում է և՛ Տաղավարյանի երիտասարդ սերնդին ուղղված կոչ-հորդորը. «Սեռական հարաբերություններում լինել զուսպ և խոհեմ»: Ե. Տաղավարյանի վերը հիշատակված գրքի լույս տեսնելուց շուրջ 70 տարի անց ահա թե ինչ է գրել խորհրդային ականավոր մանկավարժ Վ. Սուխոմլինսկին. «Եղիր զուսպ քո պոռթկումներում: Իմացիր, որ մեկը մյուսին սիրողների ֆիզիկական մոտիկությունը բարոյապես արդարացվում է միայն հատուկ հոգևոր մոտիկությամբ՝ կյանքը միասին անցնելու, երեխաներ ծնելու և դաստիարակելու, դժվարությունները բաժանելու պատրաստականությամբ: Իմացիր, որ հոգեպես հարուստ, խելացի, ազնիվ աղջկան խորապես ստորացնում, վրդովում է այն, որ մինչև ամուսնանալը պատանին ձգտում է ֆիզիկական մոտիկությանը» [10]:

Ե. Տաղավարյանի սեռական դաստիարակության հարցերը մեկնաբանող ուսումնասիրություններում առկա է մանկավարժական խնդիրներին առնչվող կարևոր մի խնդիր: Հարցը հայերի մեջ նկատվող ազգակցական ամուսնությունների մասին է: Իր մանկավարժական գործունեության ողջ ընթացքում Ե. Տաղավարյանը միշտ պայքարել է առողջ ծնունդ ապահովող գիտելիքների պրոպագանդանը: Ստորև ներկայացնում ենք մի հատված Ե. Տաղավարյանի «Ազգակցական ամուսնությունք» հոդվածից. «Մենք՝ հայերս, հիմարաբար և կապկաբար չհետևինք կույրգկության այս քաղաքակրթական հոսանքին, որ մեզ դեպի մահ կառաջնորդե: Ճանաչենք մենք զմեզ, հետևինք մեր ազգային և կրոնական հիմնավորց սովորությանց, որք իմաստությամբ հեղինակված են և միշտ ի շահ մեր ֆիզիկական և բնական կարողությանց զարգացման և ի մասնավորի հարգենք մեր նախնյաց յոթ պորտերու հաշիվը, որ առողջապահական և ազգային սովորություն մը լինելե զատ խիստ կարևոր

է որպէս տեսանք իբր կապ բարեկամության, որով անդիվ կապված պարտին լինել» [11]: Մարդկանց սեռական դաստիարակության խնդիրները, որոնք սերտորեն շաղկապված են ժամանակաշրջանի առողջապահական մակարդակին և Տաղավարյանը համարում էր խիստ կարևոր: Այդ է վկայում 1898-ին Կ. Պոլսում լույս տեսած «Առողջապահություն առտնին» գրքի առաջաբանի հետևյալ հատվածը. «Գործս ամեն դասակարգի ու հասակի տղամարդկանց և կանանց առողջապահիկ կենաց առաջնորդ է, ուր կգտնվին առողջապահական գիտությանց բոլոր օրենքներն ու հրահանգները, և միշտ ըստ գիտական այժմյան տեսությանց: Ըստ որում կարծե որ այն ամեն տան մեջ գտնվի, Բառարանագրքին և Աղոթագրքին քովն»: 1911 թվականին Կ. Պոլսում լույս է տեսել և Տաղավարյանի «Թուրքիո երեք մեծ հիվանդությունները» խիստ ինքնատիպ վերնագրով 46 էջանոց ուսումնասիրությունը: Գրքում քննարկված երեք հիվանդություններից մեկը ֆրանկախտն է սիֆիլիսը, որին հեղինակը տրամադրել է շուրջ 10 էջ: Խոսելով այդ ահավոր հիվանդության պատճառների և հետևանքների մասին, Ն. Տաղավարյանը ի մասնավորի նշել է «Օսմանյան կայսրության տարածքում բժիշկների հանձնախումբը գյուղե գյուղ շրջելով պետք է որ դարմանեն ֆրանկախտավորները, անոնց ձրի դեղ տալով ու իրենցինքները չվարակելու համար: Անոնք պետք է որ տան առողջապահական խրատներ և իհարկե ընեն կոնֆերանսներ այս հիվանդությամբ վարակման առաջն առնելու և կարճ ժամանակեն դարմանելով անկե ազատելու մասին» [12]: Սեռական դաստիարակության տարաբնույթ խնդիրների արծարծմամբ աճող սերնդի ազգային ինքնագիտակցությունը ձևավորելու, հասարակության քաղաքակրթական մակարդակը բարձրացնելուն միտված Ն. Տաղավարյանի վերը շարադրված գաղափարները չափազանց արդիական և կարևոր են նաև մեր օրերում:

Գրականություն

1. Ա. Սակարենկո, Գիրք ծնողների համար, Երևան, 1953, էջ 264:
2. Մ. Մանուկյան, Արևմտահայ մանկավարժ Նազարեթ Տաղավարյանը և իր հիմնադրած «Գիտական շարժում» ամսագիրը, «Կանթեղ», 2009, N1:
3. Ա. Աբրահամյան, Մ. Մանուկյան Նազարեթ Տաղավարյանը մանկավարժ, «Գիտությունը և կրթությունը Արցախում», 2009, N1, էջ ...
4. Ն. Տաղավարյան, Առողջապահություն առտնին, Կ. Պոլիս, 1958, էջ 428:
5. Ժան-ժակ Ռուսո, Եմիլ, կամ դաստիարակության մասին, հտ. 1, Երևան, 1960, էջ 543:
6. Ռ. Գաբրիելյան, Արևմտահայ առաջավոր բնագետ, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, ԳՍՍՌ գիտությունների ակադեմիայի հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի աշխատություններ, 1946, հ.1, էջ 122:
7. Բ.Բանդամիրյան, Լ.Այունց, Սեռական դաստիարակությունը ընտանիքում, Ե.1973, էջ 5:
8. «Դանրագիտակ» հանդես, 1899, հ. 11:
9. «Արևելյան մամուլ» հանդես, 1899, հ. 18:
10. Վ. Սուլտանիմսկի, Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980, էջ 352:
11. Ն. Տաղավարյան, Ազգակցական ամուսնությունը, Ե., 1885, N6, էջ 150:
12. Ն. Տաղավարյան, Թուրքիո երեք մեծ հիվանդությունները, Կ. Պոլիս, 1911, էջ 35: